ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23 ապրիլի 2023թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 12 անդամներից 8 անդամները ։

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուս.տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում*:/Զեկ. Դեկան/*

2. Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:/ Զեկ. ամբիոնի վարիչներ/

3. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում: /զեկ. /ԿԾ պատասխանատուներ/

4. *Հաղորդում իրական դպրոցի բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտները 2023/2024 ուսումնական տարում ԵՊՀ ԻՄՀում ինֆորմատիկա մասնագիտությամբ կրթությունը շարունակելու մասին :/Զեկ. արտաքին շահակից՝ Ս. Մնացականյան/*

5. *Հաղորդում ֆակուլտետում 2024-2025 ուս. տարում նոր մասնագիտություն ներառելու մասին: /Զեկ. Դեկան/*

6. *Հաղորդում ԻԿՄ երրորդ կուրսի ուսանողուհի Ինա Հարությունյանին «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցնելու թեկնածու առաջադրման մասին: /Զեկ. Դեկան/*

Առցանաց քվեարկությամբ՝ ութ կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

➢ Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին ՝«2022-23 ուս. տարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում », հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը։

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջին ընթացիկ քննությաուններ արդյունքները ամփոփված են, առկա ուսուցման համակարգում չկան ուսանողներ, որոնք վճարի պատճարով չեն մասնակցել քննություններին։ Առաջադիմությունը 67% , իսկ հեռակա ուսուցման համակարգում որոշ ուսանողներ վճարի պատճարով չեն մասնակցել քննություններին։ Առկա ուսուցման համակարգում ավարտվել է նաև ուսումնական պրակտիկան, հեռակա ուսուցման համակարգում դեռևս շարունակվում է։
Արտահայտվեցին ՝*Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը։*

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/2

Ընդունել ի գիտություն

Օրակարգի երկրորդ՝ «Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը։ Զեկուցողները ներկայացրեցին, որ առկա ուսուցման համակարգում ավարտական աշխատանքները գրեթե պատրաստ են։ Ուսանողները պարբերաբար հանդիպում են ղեկավարներին։ Հեռակա բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտության որոշ ուսանողներ արդեն ավարտել են աշխատանքները։

Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը արկա ուսուցման համակարգի ուսանողների համարտեղի կունենա մայիսի 13-ին։

Արտահայտվեցին

Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը։

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ 1/3

Ընդունել ի գիտություն

Օրակարգի երրորդ՝ « Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ա. Հովակիմյանը։

Ա. Հովակիմյանը ներկայացրեց, որ 2022-2023 ուս. տարվա ուսումնական պլանում փոփոխություն չկա, պետք է վերանայել մասնագրերը դասավանդող դասախոսների հետ։

2023-2024 ուս. տարվա ուսումնական պլանում տեղի ունեցել փոփոխություն ըստ ԵՊՀի առաջարկած երկու տարբեր նոր կառուցվածքի։

1. կամընտրական առարկաների առկայությամբ,
2. մասնագիտական առարկաների առկայությամբ։

Բարձր կուրսերում շաբաթը 20 ժամ , ցածր կուրսերում՝ 22 ժամ։

Արտահայտվեցին.

Ա. Հովակիմյանը, Գ. Սիմոնյանը, Մ. Ճաղարյանը։

ՈՐՈՇՈՒՄ 1/4

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Նորից վերանայել կրթական ծրագիրը և ներկայացնել հաստատման:

Օրակարգի չորրորդ՝ «*Հաղորդում իրական դպրոցի բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտները 2023/2024 ուսումնական տարում ԵՊՀ ԻՄ-ում ինֆորմատիկա մասնագիտությամբ կրթությունը շարունակելու մասին», հարցի վերաբերյալ արտաքին շահակից՝ Մ. Մնացականյան* հաղորդումը հետևյալն էր.

ՀՀ ում կան մասնագիտական քոլեջներ, որոնցից մեկը իրական դպրոցն է: Հարցադրումս հետևյալն է, քանի որ «Ինֆորմատիկա» մասնագիտությունը չունի հեռակա ուսուցման բաժին, ինչ տարբերակներ է հնարավոր իրական դպրոցի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները 2023/2024 ուսումնական տարում իրենց կրթությունը շարունակեն ԵՊՀ ԻՄ-ում ինֆորմատիկա մասնագիտությամբ: Հարցի կարևոր կողմը այն է, որ լավագույն աշակերտները կրթությունը շարունակեն մարզում: Ինչ հստակ ձևակերպումով կարելի է դիմել նախարարությանը:

Տեղի ունեցավ քննարկումներ:

Արտահայտվեցին- Մ. Զաքարյանը, Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Ք.Օթարյանը:

Ք. Օթարյանը ներկայացրեց **ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի N 856-Ն որոշման կարգը.**

Հավելված

ՀՀ կառավարության 2020 թվականի
մայիսի 27-ի N 856-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ 2020/2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

3. ՄՄՈՒՀ բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտները (այսուհետ՝ հավակնորդ) 2020/2021 ուսումնական տարում կարող են կրթությունը շարունակելու բուհում՝ համապատասխան մասնագիտությամբ՝1) եթե հավակնորդի ուսումնառած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների (առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունը) քանակը չի գերազանցում 8-ը, ապա՝

ա. մինչև 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում,

բ. 2014 թվականից սկսված ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ բարձրագույն կրթության մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման կրթության ձևը նախատեսված չլինելու դեպքում՝ երկրորդ կուրսում՝ **առկա ուսուցմամբ**.

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 1/5

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Քննարկել ձևակերպումը և ներկայացնել տնօրենին :

Օրակարգի հինգերորդ՝ «Հաղորդում ֆակուլտետում 2024-2025 ուս. տարում նոր մասնագիտություն ներառելու մասին», հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը: Մ. Զաքարյանի հաղորդումը հետևյալն է.

ԵՊՀ-ում «Ֆիզիկա», «Միջուկային ռեակտորների ֆիզիկա», «Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ», «Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա», «Ռադիոֆիզիկա», «Քիմիա» բակալավրի կրթական ծրագրերի անվճար համակարգով 2023թ. ընդունվող արական սեռի դիմորդները օգտվելու են պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքից՝ ամբողջ ուսումնառության ընթացքում (4 տարի):

Վերոնշյալ կրթական ծրագրերով ընդունված արական սեռի դիմորդները ստացած տարկետման ժամկետի ընթացքում (4 տարի) յուրաքանչյուր տարվա մինչև սեպտեմբերի 30-ը իրենց զինվորական կոմիսարիատ են ներկայացնում ԵՊՀ Հատուկ բաժնի կողմից տրված տեղեկանքը, հակառակ դեպքում կորցնում են տարկետման իրավունքը:

Տարկետում ստացած ուսանողների ուսումնառությունը դադարելու կամ այլ կրթական ծրագիր տեղափոխվելու դեպքում ուսանողը կորցնում է տարկետման իր իրավունքը:

Տարկետում ստացած ուսանողն ուսումնառության ընթացքում անվճար սովորելու իրավունքը կորցնելու դեպքում (ռոտացիա) չի կորցնում իր տարկետման իրավունքը:

ՀՀ կառավարության 2023թ. մարտի 23-ի թիվ 383-Ն որոշումը

Առաջարկեց դիմել տնօրենին 2*024-2025 ուս. տարում բնական գիտությունների ֆակուլտետում ֆիզիկա մասնագիտություն ներառել*

Արտահայտվեցին- Մ. Զաքարյանը, Ա.Հովակիմյանը, Գ.Սիմոնյանը, Մ.Ճաղարյանը, Գ. Գուլակյանը։

ՈՐՈՇՈՒՄ 1/6

Բաց քվեարկությամբ՝ 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվել է.

Քննարկել ձևակերպումը և ներկայացնել տնօրենին :

Օրակարգի *վեցերորդ՝ «Հաղորդում ԻԿՄ երրորդ կուրսի ուսանողուհի Ինա Հարությունյանին «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցնելու թեկնածու առաջադրման մասին»,* հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Մ. Զաքարյանը։

Զեկուցողը ներկայացրեց, որ Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտության «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի երրորդ կուրսի ուսանողուհի Ինա Հրայրի Հարությունյան վեց կիսամյակ անընդմեջ սովորում է գերազանց։

ԵՊՀ ԻՄ-ի՝ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում ստանում է «ՀԱՄԼԵՏ ԿԱՐԱՅԱՆ» ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ։

2022թ մարտին կազմակերպված Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ միջազգային գիտագործնական համաժողովին «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» ամբիոնի դասախոս Ք. Օթարյանի ղեկավարությամբ, մասնակցել է «Սոցիալ-մանկավարժական նորարարությունները կրթության մեջ»

միջազգային գիտագործնական 1-ին համաժողովին: Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության մեջ թեմայով հոդվածը տպագրվել է միջազգային գիտագործնական համաժողովի հոդվածների հավաքածուում:

Ընդգրկված է ԵՊՀ ԻՄի զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրերի 1.2 խնդրի/Մրցունակ կրթական ծրագրեր/ 11-րդ գործողության/ մասնաճյուղի կրթական ծրագրերը հավատարմագրման /իրականացման համար ձևավորված կրթական ծրագրերի ինքնավերլուծությունը իրականացնող աշխատանքային խմբում:

Արտահայտվեցին Ա. Հովակիմյանը, Գ. Սարգսյանը, Մ. Զաքարյանը, Մ. Ճաղարյանը, Ք. Օթարյանը:

Առցանաց քվեարկությամբ՝ 8 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/7

Ներկայացնել *ԻԿՄ երրորդ կուրսի ուսանողուհի Ինա Հարությունյանին մասնակցելու «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տարվա ուսանող» ամենամյա մրցույթին :*

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ